ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

№ ԴԴ-1 Շ-129

«11» հունվարի 2022թ.

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՋԱԴՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զադոյան,

Ի պատասխան Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարին հասցեագրված Ձեր 03.01.2022թ. թվով չորս գրությունների՝ տեղեկացվում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Սահմանադրությամբ սահմանված մարմինները կալիս են իրենց ոլորտային օրենսդրական ակտերի պաշտոնական պարզաբանումը, բացառությամբ դատական համակարգի մարմինների:* Հետևաբար, վերը նշված գրությունների հիման վրա ՀՀ կառավարության 10.10.2019թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) կապակցությամբ պաշտոնական պարզաբանումներ տրամադրելը դուրս է Բարձրագույն դատական խորհրդի և Դատական դեպարտամենտի լիազորությունների շրջանակից:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ բաժնի 1-ին կետը սահմանում է, որ *Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի լիարժեք և արդյունավետ իրագործման ապահովման նպատակով կազմավորվում է 15 անդամներից բաղկացած Համակարգող խորհուրդ (Խորհուրդ): Խորհուրդը Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքի համակարգմանը, մշտադիտարկմանը և գնահատմանն աջակցելու գործառույթներ իրականացնող մշտապես գործող բազմաշահառու խորհրդատվական մարմին է:*

Նույն հավելվածի 2-րդ բաժնի 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝

8. Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի իրականացման համակարգումը և մշտադիտարկումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի քարտուղարություն են ներկայացնում Գործողությունների ծրագրերով իրենց վերապահված գործողությունների կատարման ընթացքի

վերաբերյալ հաշվետվություն: Խորհրդի քարտուղարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը ներկայացնում է Խորհրդին ու տեղադրում արդարադատության նախարարության պաշտոնական կայքի հատուկ բաժնում:

9. Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի ընթացքի մշտադիտարկման և գնահատման գործառույթներն իրականացնում է արդարադատության նախարարությունը՝ դրա համար պատասխանատու նշանակված կառուցվածքային ստորաբաժանման միջոցով, որը յուրաքանչյուր տարվա վերջում մշտադիտարկման ու գնահատման վերաբերյալ զեկույցը ներկայացնում է Խորհրդին: Մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցը հաստատում է Խորհուրդը:

Վերոգրյալից ելնելով՝ տեղեկացվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես Որոշմամբ սահմանված պատասխանատու մարմնի, կողմից գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է ներկայացման բացառապես **Խորհրդի քարտուղարությանը,** որն էլ իր հերթին, պատվիրակված լիազորությունների շրջանակում, Որոշմամբ սահմանված գործողությունների կատարման գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով, հրապարակում է կիսամյակային, տարեկան հաշվետվությունները և զեկույցները: Հետևաբար, առաջարկվում է առանց ֆոկուս խմբային քննարկումն իրականացնել առանց Բարձրագույն դատական խորհրդի ներկայացուցչի մասնակցության:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Մ. Դանիելյան
Հեռ. 511-815